

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ԲԱՅԱԿԱՆ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Կրկնությունները թուրքերեն լեզվի զարգացման յուրաքանչյուր փուլում ամենագործածական լեզվական երևույթներից են: Կրկնությունը, որպես բառակազմության առավել արդյունավետ միջոց, լայնորեն կիրառվում է նաև ժամանակակից թուրքերենում: Թուրքերենի լեզվական առանձնահատկություններից ելնելով՝ լեզվում գոյություն ունեն կրկնությունների բազմաթիվ կաղապարաձևեր: Դրանք լայնորեն գործածվում են թե՛ գեղարվեստական, և թե՛ ժողովրդա-խոսակցական լեզվում՝ խոսքին առավել արտահայտչականություն և հուզականություն փոխանցելու նպատակով:

Կրկնությունը (*բաղադրություն, repetition, reduplication, hendiadyoin ikileme*), բառակազմության մեջ, ի տարբերություն պարզ բառերի, առանձին խումբ կազմող այն բառերն ու բառակապակցություններն են, որոնք ներկայանում են իբրև տարբեր տարրերի (բառ, հիմնական ձևային, ածանց, սկզբնահնչյուն՝ սկզբնատառ, բառի սկզբնամաս և այլն<sup>723</sup> համակցում՝ բաղադրում: Կրկնությունը (բաղադրություն) կաղապարող տարրերը կոչվում են բաղադրիչներ<sup>723</sup>:

Ըստ մի խումբ թուրք լեզվաբանների ուսումնասիրությունների՝ թուրքերեն լեզվին վերաբերող դեռևս առաջին հուշարձաններում՝ *բուն թյուրքական (Göktürk Yazıtları*<sup>724</sup> *և orhonյան ձեռագրերում (Orhon Yazıtları*<sup>724</sup>, *Մ. Քաշգարիի «Թուրքերեն լեզվի բառարան» - ում ("Divanü Lügat-i Türk"*<sup>725</sup>, «*Քութադգու Բիլիգ» բարոյախոսական պոեմում ("Kutadgu Bilig"*<sup>726</sup> «*Քրասայու ի էնբիյադա» ("Kıyasü-i Enbiyada"*<sup>727</sup>, *հին ուլդուրերեն լեզվում հանդիպող կրկնությունները (Eski Uygur Türkçesinde İkilemeleri*<sup>728</sup>, «*Դեդե Բորքուդ» էպոսում ("Dede Korkut Destanları"*<sup>729</sup> հանդիպում են բազմաթիվ կրկնություններ՝ *mal mülk – ունեցվածք, ev bark – տուն տեղ, ընտանիք երեխա, kız kadın – սովորաբար իգական սեռի երեխաներ և չափահասներ, geceli gündüzlü – գիշեր ցերեկ, derlemek toparlamak – հավաքել պահել*:

Թուրքերենի կրկնությունների ուսումնասիրմամբ զբաղվել են թուրք հեղինակները՝ հրատարակելով մի շարք հոդվածներ: Հարցի պատմության տեսանկյունից հատկապես առանձնանում է Վեջիհե Հաթիֆօղլուի արժեքավոր մենագրությունը<sup>730</sup>:

Հայերենագիտության մեջ կրկնության (բաղադրություն) հարցերը դիտարկվել են դեռևս շատ վաղուց<sup>731</sup>: Հայ լեզվաբանների մի մասը տարբերակում են բաղադրության երեք տիպ՝ վերլուծական, համադրական և հապավական, մյուս մասը՝ բարդությունները բաժանում է երկու հիմնական խմբի՝ անիսկական և իսկական<sup>732</sup>:

Այս տարատեսակներից յուրաքանչյուրը առկա է նաև ժամանակակից թուրքերենում, թեև հարկ ենք համարում նշել, որ թուրքերենում դեռևս չի արվել բաղադրությունների դասակարգում, ստորաբաժանում, իսկ տերմինների հարցում

<sup>723</sup> Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Երևան, 1987, էջ 75:

<sup>724</sup> Tekin T., İkizlemeler Orhon Yazıtları, Kül Tigin, Bilge Kagan, Tunyukuk, İstanbul, 1998, s. 15-17.

<sup>725</sup> Sev G., Divanü Lügat-i Türkte İkilemeler, Türk Dili, Sayı 634, Ankara, 2004, s.497-510.

<sup>726</sup> Ölmez Z.K., Kutadgu Biligde İkilemeler, Türk Dili Araştırmaları, Ankara, 1997.

<sup>727</sup> Talu F. N., Kıyasül Enbiyada İkilemeler, Mersin, 2003.

<sup>728</sup> Sen S., Eski Uygur Türkçesinde İkizlemeler, Samsun, 2002.

<sup>729</sup> Şen S., Dede Korkut Destanlarında Aralıklı İkilemeler, Türk Dili, Sayı 557, Ankara, 1998, s. 464-470.

<sup>730</sup> Hatiboğlu V., Türk Dilinde İkilemeler, Ankara 1981.

<sup>731</sup> Ջահուկյան Գ., Ադայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, առաջին մաս, Ա պրակ, Երևան, 1980:

<sup>732</sup> Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Հայոց եզվի պատմություն, Երևան, 1989, էջ 34:

առհասարակ չկա միակարծություն և հասակություն<sup>733</sup>: Թուրք հեղինակները կրկնություն տերմինի համար օգտագործում են *İkileme, İkizleme, Çift Söz, Hediadyoin, Yineleme, Tekrarlama, Pekıştirmeli Sifat* տերմինները<sup>734</sup>:

Թեմային անդրադարձել են նաև ռուս լեզվաբանները՝ տալով թուրքերենի կրկնությունների իրենց դասակարգումները<sup>735</sup>: Ռուս լեզվաբան Ռ. Ագանինը թուրքերենի բարդությունները դասակարգել է ըստ արտաքին նմանության՝ տալով դրանց նույնական և ոչ նույնական կրկնություն անվանումը<sup>736</sup>: Նույնական կրկնությունների տերմինի տակ Ագանինը հիմնականում ներկայացնում է հենց բայական կրկնությունները և աննշան քանակով անվանական կրկնությունների տեսակները, իսկ ոչ նույնական կրկնությունները դասակարգելիս լեզվաբանն անդրադառնում է անվանական կրկնություններին: Մակայն նման դասակարգումը լիարժեք չէ և թերևս թերի է, քանի որ կրկնությունները դասակարգվել են ըստ արտաքին նմանության:

Ինչպես նշեցինք, կրկնությունը ժամանակակից թուրքերենի բառակազմության ամենաարդյունավետ միջոցներից է: Կրկնությունը թուրքերենում կարող է ձևավորվել բոլոր խոսքի մասերից: Սույն հոդվածում փորձ է արվել ներկայացնել ժամանակակից թուրքերենի առավել հետաքրքրական *բայական հարադրական բաղադրությունները*, դրանց կազմության առանձնահատկությունները, կաղապարաձևերը ցույց տալ դրանց հայերեն համարժեքները:

*Բայական հարադրական բաղադրությունները* մեկ բառային իմաստ արտահայտող բառերի կապակցություն են և բայակազմական ինքնատիպություն ներկայացնող բառախումբ: Բայական հարադրությունների բաղադրիչներից մեկը՝ հիմնականում վերջինը, կամ բոլորը բայեր են, օրինակ՝ *bıkmak usanmak (բայ+բայ) - զգվել, հոգնել, bitmek tükenmek (բայ+բայ) - սպառել վերջանալ, çalışmak çabalamak (բայ+բայ) - աշխատել, չարչարվել, etmek eylemek (բայ+բայ) - գործել, գործարկել, yalvarmak yakarmak (բայ+բայ) - խնդրել, աղաչել պաղատել, banyo yapmak (գոյ.+բայ) - լողանալ, söz etmek (գոյ.+բայ) - խոսել, պատմել, գրուցել, dans etmek (գոյ.+բայ) - պարել, memnun olmak (ած.+բայ) - գոհ լինել, can can etmek (գոյ.+բայ) - սիրալիրություն ցուցաբերել*: Բովանդակային առումով նման բաղադրություններն արտահայտում են մեկ բառային իմաստ: Այս կառույցները որպես կանոն անցել են բառապաշարային կայուն ֆոնդ և փոխաբերական իմաստավորումներով դարձվածքաին գործառություն ունեն<sup>737</sup>:

*Բայական հարադրությունները* իրենց հերթին լինում են *հարադրավոր* և *գուգորդական բայեր* (գուգաբայական հարադրություններ կամ գուգադրական բայեր)<sup>738</sup>: Հարադրավոր բայերի պարագայում միայն մեկ բաղադրիչն է բայ: Հարադրավոր բայը կազմված է հարադրից՝ այսինքն ոչ բայական մասից՝ հարադիր + բայական բաղադրիչ կաղապարով, երկկազմ են՝ *հարադիր* և *հարադրյալ*: *Հարադիրը* կարող է լինել գոյական

<sup>733</sup> Güler S., A study on Turkish reduplications, some observations on form and function of Reduplication, Mersin 2003, s. 36. <http://mersin.mitosweb.com/browse/78990/T00274.pdf?>

<sup>734</sup> Hatiboğlu V., Türk Dilinde İkilemeler, Ankara 1981, s.283, Demircan O., Aksan D., Her Yönüyle Dil Ana Çizgileriyle Dilbilim, Ankara, 2000, s. 43, Çağatay S., Uygurca Hendiadyonlar, Dil ve Tarih Coğrafya Fakültesi Yıllık Çalışmalar Dergisi, Sayı 1, Ankara, 1978, s. 97-144, Ağakay M., İkizlemeler Üzerine, Türk Dili, c. II., Ankara, 1953, s. 16-17, Vardar B., Açıklamalı Dilbilim Terimleri Sözlüğü, İstanbul, 2006.

<sup>735</sup> Аганин Р., Повторы и однородные сочетания в современном турецком языке, Москва, 1959, Кононов А., Грамматика современного турецкого литературного языка, Москва 1956, Зарипова А., Редупликация в английском и турецком языках, Вестник Челябинского государственного университета, Филология, Искусствоведение, 13 (91), 2007, с. 28.

<sup>736</sup> Аганин Р., նշվ.աշխ., էջ 23:

<sup>737</sup> Kocaman A., Eğitim ve Öğretimde Kitaplar, Dizi 2, İstanbul, 1992, s. 23.

<sup>738</sup> Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 76:

ածական, դերանուն, մակբայ և այլն, *dans etmek, söz etmek, banyo yapmak, memnun olmak*: *Հարադրյալը* (բայական բաղադրիչը) պայմանավորում է խոսքի մասային իմաստը, քերականական իմաստավորումները: *Հարադրյալը*, որ կրկնության բայական բաղադրիչն է, բառաբարդելիս խոնարհվում է<sup>739</sup>:

*Զուգադրական բայերը* բնորոշվում են նրանով, որ դրսևորվում են երկու բայական բաղադրիչով, որոնցից յուրաքանչյուրը պահպանում է իր հարաբերականորեն անկախ արտասանությունը և ինքնուրույն բառաշերտը: Բովանդակային առումով առկա է մեկ ընդհանուր ամբողջական իմաստ: Գրավոր խոսքում բաղադրիչները գրվում են առանձին, անջատ՝ ի տարբերություն հայերենի, որտեղ սրանք, որպես կանոն, գրվում են գծիկով, սակայն լինում են նաև բացառություններ: Բաղադրիչները պետք է իմաստային առնչություն ունենան միմյանց հետ: Կան այնպիսի բայական հարադրություններ, որի երկու բաղադրիչներն էլ կարող են խոնարհվել՝ թե՛ միմյանցից անկախ տարբեր, և թե՛ միևնույն ժամանակաձևերով: Բաղադրիչները համապատասխանում են ըստ անդամ և դիմավոր ձևերի: Անորոշ դերբայի ձևերը հոլովվում են երկու բաղադրիչով, երբեմն՝ միայն երկրորդ բաղադրիչը: Հարադրությունները սովորաբար կազմվում են հոմանիշ, մերձիմաստ բայերի կապակցությամբ: Օրինակ՝ *yemek içmek - niunte jımdet, durmak dinlemek - kändqñet händqutandı, çıkip gitmek - ğıru qal qındı, kırıp dökmek - zırdetel şıfıtel, ölcup bıçmek - çıfıtel dñet*: Յույց են տալիս միմյանց զուգորդվող գործողությունների միասնություն, իբրև միասնական գործընթաց ժամանակային նույն պլանում իրականացվող<sup>740</sup>:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում ժամանակակից թուրքերենի զուգադրական բայերով կազմված կրկնությունները՝ իրենց կառուցվածքային, իմաստաբանական առանձնահատկություններով: Թուրքերենում գոյություն ունեն բայական հարադրությունների մեծաթիվ կաղապարաձևեր: Բայական կրկնություններ կազմվում են ինչպես բայի անորոշ, դիմավոր այնպես էլ խոնարհված ձևերից: Բաղադրիչներից յուրաքանչյուրը կարող է հանդես գալ ինքնուրույն կամ կապակցված լինեն այս կամ այն շաղկապներով, սպասարկու բառերով, զանազան ածանցներով, ներդիր մասնիկներով: Փորձենք սրանցից յուրաքանչյուրը ստորև մանրամասն ներկայացնել՝ տալով դրանց հայերեն համարժեքները:

## 1. Ածանցների միջոցով կազմված բայական կրկնություններ

ա. Ժամանակակից թուրքերենում բայական բաղադրության մի տեսակ է, երբ բայի անդամ ձևին (*mak, mek*) կցվում է բառակազմական *-li* ածանցը: Այս կրկնություններն արտահայտում են ածականական իմաստ: *-li* ածանցը, կցվելով գոյականներին՝ կազմում է գոյականներ և ածականներ, որոնք ունեն հետևյալ իմաստները՝ ունեցող, օժտված, բնութագրող, բնակվող, ծագում ունեցող<sup>741</sup>: Օրինակ՝ *ağlamaklı ağlamaklı - jıgındımdı: Ağlamaklı ağlamaklı sesi gelmeye başladı. - Şıfıtel jıfıtel ğıru jıgındımdı dıjırd*:

բ. Ուշադրության է արժանի նաև *-imsi* բառակազմական ածանց ստացած դերբայով արտահայտված որոշիչների կրկնությունը: Կրկնության այս ձևը հազվադեպ է հանդիպում: Թուրքական քերականությունը դրա նկատմամբ չունի մշակված մոտեցում<sup>742</sup>: Որպես կանոն՝ այս ածանցն առավել բնորոշ է ածականներին և գոյականներին: Սակայն

<sup>739</sup> Նույն տեղում, էջ 368:

<sup>740</sup> Նույն տեղում, էջ 370:

<sup>741</sup> Սաֆարյան Ա., Սողոմոնյան Ա., Լոքմազյոզյան Ս., Թուրքերենի դասագիրք, Երևան, 2011, էջ 27:

<sup>742</sup> Кононов А., նշվ. աշխ., էջ 247-248:

կիրառվում է նաև բայերի հետ: *Makina gibi, ağlayımsı ağlayımsı, deyin ağalar, ne günahım var benim.* - Ակամայից մեքենայաբար լացելով ասում էր. պարոններ, ասեք, ես ինչ մեղք ունեմ:

գ. Ժամանակակից թուրքերենում շատ մեծ թիվ են կազմում զանազան դերբայներով կազմված բայական կրկնությունների կաղապարաձևերը: Այսպես՝ -y (a) դերբայը, որը սովորաբար հանդես է գալիս որպես գործողության կատարման ձևի պարագա, կիրառվում է բացառապես կրկնության տեսքով<sup>743</sup>: Չհաշված մի քանի բացառություններ՝ այդ դերբայներն այլ կերպ հանդես չեն գալիս<sup>744</sup>: Ժամանակակից թուրքերենում -y (a) դերբայով, առանց բացառության, կրկնություններ են կազմվում բոլոր բայերից: Օրինակ՝ *eksile eksile - ժամանակի ընթացքում դանդաղորեն պակասել:*

*Gümrük kapılarına dayanmış gündelik hayat*

*Eksile eksile kaybolan varoluş.*

*Առօրյա կյանքը, որը հասել են մաքսատան դռներին,*

*Կամաց-կամաց անկացող գոյ:*

*Döndüre döndüre-պտտվելով չորս կողմը լավ գննել:* *Keyfince gir, döndüre döndüre beğen, pahasını kesiş kavra halvete sok- Ուզածիդ չափ մտիր, չորս կողմը լավ ուսումնասիրիր և հավանիր, գնի մասին պայմանավորվիր, արժեքը մտքումդ պահիր:* *Düşüne düşüne - մտածելով, մտածելով: Anlaşılır şey değil böyle geleceği düşüne düşüne.* - Նման սպասյալն այդպես մտածելով հասկանալ հնարավոր չէ:

դ. Թուրքերենում լայն կիրառություն ունի -y (ip) դերբայով կազմված կրկնությունը<sup>745</sup>: Իմաստաբանական առումով այս կրկնությունները կարող են կազմվել մերձիմաստ և նույնարմատ բառերից<sup>746</sup>:

ա) Բաղադրիչներից երկուսն էլ կարող են հանդես գալ -y (ip) դերբայով, սա թերևս ամենատարածված տարբերակն է՝ *boyanıp boyanıp - ներկվելով: Boyanıp boyanıp yeryüzüne çıkıyorduk derinlerden.* - Ներկվելով լույս աշխարհ դուրս եկանք խորքերից: *Bakıp bakıp- նայելով: Bakıp bakıp ağladılar sesizce.* - Նայելով նայելով անձայն արտասուցին:

բ) Բաղադրիչներից մեկը՝ հիմնականում առաջինը, հանդես է գալիս -y (ip) դերբայով, իսկ երկրորդը՝ բայի խոնարհված ձևերով: Օրինակ՝ *ağlaşıp meleşmek - ցավով և կսկիծով խոսել դժբախտ ճակատագրի մասին: Yalova depreminde ağlaşıp meleşen insanları gördükçe içim parçalandı.* - Յալովայի երկրաշարժից հետո դժբախտ մարդկանց տեսնելով ներսս կտոր-կտոր էր լինում: *Ağlayıp sızlamak - լացելով բողբոլել: Işığ o düzünün sarayından kaçırın yüğüt gayanın başında yıllarca yattı. Dışını sıktı, heç ağlayıp sızlamadı.* - Այդ անպիտանի պալատից լույսը փախցրած հերոսը տարիներով պառկեց ժայռի կատարին: *Դիմացավ և ոչ մի անգամ չբողբոլեց:*

գ) Երկրորդ բաղադրիչը կարող է լինել անորոշ դերբայ կամ բայանուն՝ *olup pişmek - olup pişmesi* - հասունանալ գիտակցական մակարդակի գալ: *İnsanların olup pişmesi öyle kısa zamanda gerçekleşecek bir iş değil.* - Մարդիկ այդքան կարճ ժամանակում չեն հասունանում: *sorarıp solmaktan - գույնը զցել, երկարատև հիվանդության հետևանքով դեղնել: Ne çare ki koskoca deikanlı kız çocukları gibi gizli gizli ağlamaktan ve her gün bir parça daha sorarıp solmaktan başka bir şey yapamıyordu.* - Ինչ օգուտ, որ այդ հսկա երիտասարդը աղջիկ երեխայի նման զաղտնի լացելուց և ամեն օր ավելի ու ավելի դալկանալուց բացի ոչինչ անել չէր կարողանում: *Olup olmadığı - լինել չլինելը, եղած չեղածը: Danta ve Milton kadar saldırgan olup olmadığı tartışması hep ortadır.* - Անընդհատ օրակարգում էր նրա Դանտա և Միլտոնի չափ ագրեսիվ լինել չլինելու հարցի քննարկումը: *Kesmek kıymak - դանակով*

<sup>743</sup> Eker S., Çağdaş Türk Dili, Ankara, 2002, s. 288.

<sup>744</sup> Щека Ю., Интенсивный курс турецкого языка, Москва, 2008, с. 269-270.

<sup>745</sup> Кононов А., նշվ.աշխ., էջ 974-975:

<sup>746</sup> Аганин Р., նշվ.աշխ., էջ 24:

կամ այլ նմանատիպ իրերով մասերի բաժանել, կտրատել, կտոր-կտոր անել, մորթել: *Bugün beş ortak kestiğimiz danadan payımıza düşeni kesmek kıymakla uğraştık.* - Այսօր ողջ օրը հինգ գործընկեր մեր մորթած հորթից բաժին հասածը մասնատելով էինք զբաղված:

դ) Առաջին բաղադրիչը հանդես է գալիս դերբայով, իսկ երկրորդը՝ մերձիմաստ կամ հոմանիշ նույն բայի փոխադարձ - համատեղ սեռով (*İsteş Çatı*), որին ավելացել է նաև պատճառական սեռը (*Entirgen Çatı*)<sup>747</sup>: Առաջին բաղադրիչը պարտադիր հանդես է գալիս ներգործական սեռով՝ *Bahsi dönüp dolaştırıp gene ona getiriyorum.* - Թեման անընդհատ պտտելով ես կրկին վերադառնում եմ նրան: *Sorup soruşturmak* - լավ հարցաքննել: *Bütün filimleri, raporları teker teker gözden geçirdi, bir çok şeyler sorup soruşturdu.* - Բոլոր ժապավենները և անալիզները մեկ առ մեկ նայեց և մանրամասն հարցաքննեց: *Bulup buluşturmak* - ամեն ջանք գործադրել, որ գտնվի, տակնուվրա անել, պրպտել: *Takıp takıştırıp gezip tozacağına eve kapanıyordu.* - Ամեն օր պճնվելու և զբոսանքի դուրս գալու փոխարեն նա մնում էր տանը փակված:

ե) Հնարավոր է նաև, որ երկրորդ բաղադրիչը հանդես գա -y (ip) դերբայով օրինակ՝ *Kaylan kayıp* - անբողոքի՛ն ոչնչացնել, ավիրել: *Tanınmaz olmuş tarlalar. otun imi timi kalmamış kaylan kayıp olmuş.* - Դաշտերը դարձել էին անճանաչելի, խոտի հետքն անգամ չէր մնացել, ամեն ինչ ավիրված էր:

Նշենք, որ -y (a/e) և -y (ip) դերբայների կրկնության նպատակները զգալիորեն տարբերվում են իրարից: Առաջինում կրկնությունը, համապատասխան ձևաբանական մասնիկով, հանդես է գալիս որպես քերականական օրինաչափություն: Իսկ -y (ip) -ով կրկնությունն ունի զուտ իմաստաբանական նշանակություն: Այս կերպ արտահայտվում է բազմակիություն, գործողության կատարման պարբերականություն: Հարկ է նշել, որ -y (a/e) - ով արտահայտված կրկնությունների բաղադրիչները կարող են նաև կազմվել հոմանիշ, հականիշ բառերով: -y (ip) դերբայով կրկնություններ կարող են կազմվել և իմաստով իրար մոտ, և նույնարմատ բառերից<sup>748</sup>: Դերբայներով կազմված կրկնությունների թվին կարելի է դասել նաև -y (arak/erek) դերբայով կրկնության տեսակները, որոնք իմաստատճական առումով հիմնականում համապատասխանում են -y (ip) և -y (a/e) դերբայներով կազմված կրկնություններին<sup>749</sup>: Սակայն -y (a/e) դերբայի միջոցով կազմված կրկնություններն իմաստային առումով առավել ազդեցիկ են: Օրինակ՝ *koşa koşa geldi kıl kıl koşarak geldi vısqınlıq kıl kıl kıl vısqınlıq kıl kıl, bakına bakına gidiyordu kıl kıl bakınarak gidiyordu* - նայելով նայելով գնում էր: Հայերենում իմաստատճական նուրբ տարբերությունները թերևս այդքան էլ ակնհայտ չեն:

ե. Վերոնշյալ դերբայներին բնորոշ իմաստատճական առանձնահատկությունները շատ հաճախ փոխանցվում են բայահիմքի պարզ կրկնության միջոցով<sup>750</sup>: Օրինակ՝ *Dur dur-կանգնելով: Süleyman emmi böyle dur dur ne olacak. Benim canım sıkılıyor.* - Սուլեյման քեռի, այսպես կանգնելով կանգնելով ինչ դուրս կգա: *Eu անձրանում եմ: Git gel -գնալ գալ: Denizdeki dalgalar git geller hiç bitmez buralarda.* - Ծովի ալեկոծությունները (ալիքների գնալ գալը) այստեղ երբեք չեն դադարում:

Պարզ բայահիմքով կազմված կրկնության մեկ այլ տարբերակ է նաև, երբ առաջին բաղադրիչը հանդիսանում է բայահիմք, իսկ երկրորդին ավելանում է -ıştır ածանցը *ara araştır* - լավ փնտրիր, *bul buluştur* - գտիր, *çek çekiştir* - լավ քաշիր, *puşpuşla* - քիչ քիչիստ - զծիր զծմծիր, *sor soruştur* - լավ հարցաքննիր, *sür sürüştür* - մի լավ քշիր, *tak takıştır* - լավ կախիր, *ver veriştir* - մի լավ կշտամբիր:

<sup>747</sup> Սաֆարյան Ա., Սողոմոնյան Ա., Լոբնազյան Ս., նշվ.աշխ., էջ 92-94:

<sup>748</sup> Кононов А., նշվ.աշխ., էջ 969:

<sup>749</sup> Akyalçın N., Türkçe İkillemeler, Ankara, 2007, s. 31.

<sup>750</sup> Նույն տեղում, էջ 36:

Մեկ այլ տարբերակ, երբ բայահիմքին ավելանում է -ele ածանցը: Օրինակ՝ *bur burala - մի լավ խառնիր, çek çekele – մի լավ քաշիր, diz dizele – մի լավ դասավորիր, it itele – մի լավ հրիր, kar karmala - մի լավ խառնիր, dür dürmele - մի լավ փաթաթիր, sar sarala - մի լավ փաթաթիր:*

զ. Բայական հարադրության մեկ այլ տեսակ կազմվում է ենթակայական (ածական) դերբայով (-an ekiyle kurulan ortaclar)<sup>751</sup>: Այս պարագայում բաղադրիչներից առաջինը հանդես է գալիս ենթակայական դերբայով *an/en, yan/yen*, իսկ մյուսը՝ *-y (ene)* ածանցով: Օրինակ՝ *alan alana - բոլոր վերցնողները, gelen gelene – բոլոր գնացող եկացողները, gülen gülene - բոլոր ուրախացողները:*

է. Շատ մեծ թիվ են կազմում նաև պայմանական ցուցիչով կազմված կրկնությունները: *Olsa olsa – եթե լինի, լինի: Burada olsa olsa yüz kadar kitap var. - Այստեղ եղած չեղած հարյուր գիրք կա: Olursa olur Abdi Ağa olmazsa, kim olursa olur. - Եթե Աբդի աղան չլինի, ով լինում է լինի: Ölümsek ölümsek - հազիվ, մեռնելով: Öyle ölümsek ölümsek yürürsen donar kalırsın. - Եթե այսպես դանդաղ (մեռնելով) քայլես, կսառչես: Olmazsa olmaz - շատ անհրաժեշտ: Olmazsa olmaz maçlardan biri. – Շատ անհրաժեշտ խաղերից էր: Olmuşsa olmuş - ինչպես լինում է լինի, ինչ գնով էլ լինի: Sonra nasıl olmuşsa olmuş, romantik çağ Batı modernizminin içine bu ateşi üflemiş. - Հետո թե ինչպես պատահեց, արևմտյան ռոմանտիկ մոդեռնիզմի դարաշրջանի ներքում այդ կրակը սկսեց բորբոքվել: Olsun olsun – թող լինի: Kitaptaki adam olsun olsun 70, en fazla 80 olabilir. Գրքի մեջ եղած մարդը թող լիներ յոթանասուն ամենաշատը՝ ութսուն տարեկան:*

Հանդիպում են նաև բաղադրյալ պայմանական ժամանակաձևերի (Kozul Bileşik Zamanı)<sup>752</sup> միջոցով կազմված կրկնությունների բազմաթիվ օրինակներ, բայց այս դեպքում ածանցը չի իրականացնում իր բուն գործառույթը: Նման կառույցները, որպես կանոն, հաջորդում են հարցին և ածանց ստացած բաղադրիչների միջոցով կազմված բարդությունը, հանդես գալով որպես հարցի պատասխան, շատ ավելի կտրուկ, միանշանակ և անտարակուսելի երանգ է պարունակում: Օրինակ՝ *Hayvan almağa mi geldin? Sana ne? Neye gelmişse geldim. - Ինչ է՝ դու եկել ես անասուն գնելու: Քեզ ի՞նչ: - Ինչի համար որ պետք է, դրա համար էլ եկել եմ: İstemem istemem kocaya varmiyayım. Niçin ? Niçinse niçin. - Առանց ցանկության չեմ ամուսնանա: Ինչո՞ւ: Ինչպե՞ս թե ինչու:*

Երբեմն այս ածանցը կարող է կիրառվել այնպիսի բաղադրիչների հետ, որոնցից յուրաքանչյուրը հանդես է գալիս անորոշ անցյալ ժամանակաձևով (Belirsiz Geçmiş Zaman): Նման կառույցներն իմաստային առումով ավելի մոտ են *ne* հարցական դերանվանը: *Bir ay sonra Mollanın aklına ne gelmişse gelmiş - Մի ամիս անց Մոլլայի մտքով ինչ ասես որ չանցավ:*

Նման կառույցները հանդիսանալով պայմանի պարագա երկրորդական նախադասության ստորոգյալ պահանջում են, որ գլխավոր նախադասության ստորոգյալը ևս արտահայտված լինի նույն բայով: Նման կառույցներն առավել ընդգծում են գործողության առանձնակի բնույթը, իրականացման կարևորությունը: Բայական հարադրությունների մեջ ձևակազմական արժեք ունեն *vermek* տալ բաղադրիչով *-y (i)* դերբայով կազմված և պատճառական իմաստ արտահայտող բաղադրությունները:

Ամփոփելով՝ նշենք, որ թուրքերենի զարգացման յուրաքանչյուր փուլում կրկնությունը եղել և մնում է որպես ամենից կենսունակ և կիրառական բառակազմական միջոց: Թուրքերենի լեզվական առանձնահատկություններից ելնելով՝ լեզվում գոյություն ունեն կրկնությունների՝ հատկապես բայական կրկնությունների բազմաթիվ

<sup>751</sup> Սաֆարյան Ալ., Սողոմոնյան Ա., Լոքմազյոզյան Ս., նշվ. աշխ., էջ 315:

<sup>752</sup> Նույն տեղում, էջ 317:

կաղապարաձևեր: Բայական ձևերն ըստ իրենց իմաստային գործառույթի բաժանվում են բայական և անվանական խմբերի, որոնք հավասարապես կիրառական են խոսքում: Ըստ կառուցվածքի՝ դրանք լինում են հարադրավոր և զուգադրական, իսկ ձևաբանորեն կարող են կազմվել ածականակերտ, դերբայակերտ ածանցներից: Կրկնությունների այս տեսակը լայնորեն գործածվում է թե՛ գեղարվեստական, և թե՛ ժողովրդա-խոսակցական լեզվում՝ խոսքին առավել արտահայտչականություն և զգացմունքայնություն փոխանցելու նպատակով: Կաղապարաձևերի մի մասն ունի բուն թյուրքական ծագում, մյուս մասը փոխառված է օտար լեզուներից: Երկու դեպքում էլ այդ բազմաթիվ կաղապարաձևերը ծառայում են խոսքը հարստացնելու, առավել ազդեցիկ, արտահայտիչ դարձնելու համար: Հատկանշական է նաև, որ շատ բայական կրկնություններ, զարգացման որոշակի փուլ անցնելով, ձևեր են բերել դարձվածքային նշանակություն՝ ամրագրվելով բառային կայուն ֆոնդում:

## ГЛАГОЛЬНЫЕ ПОВТОРЫ В СОВРЕМЕННОМ ТУРЕЦКОМ ЯЗЫКЕ

*Диана Айрапетян*

(Резюме)

На каждом этапе развития турецкого языка повторы и повторные сочетания являются самой продуктивной формой словообразования. Исходя из специфики языка, в нем есть большое число повторных конструкций, в частности глагольных повторов. Часть этих форм заимствована, у других исконно турецкое происхождение. По смысловой структуре глагольные повторные конструкции делятся на две группы: отименные и отглагольные, которые в равной степени употребляются в современном языке. Морфологически повторы могут оформляться аффиксами прилагательных и разных деепричастий. Повторы широко употребляются в художественной литературе и в народно-разговорной речи для передачи особенной выразительности и эмоциональности. Парные сочетания в результате частого употребления и лексикализации комплекса в большей части уже соотносительны с разрядом фразеологических единиц и употребляются в функции эквивалента слова. Поэтому среди парных сочетаний намечаются и синтаксические конструкции, и устойчивые фразеологические образования.